ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07/99
ԱՄՀ-ի մշտական ներկայացուցչի գրասենյակ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան
16-ը մայիսի, 2007

Արժույթի Միջազգային Հիմնադրամն ավարտում է ԱԿՏԱ ծրագրի չորրորդ ամփոփումը և Հայաստանի Հանրապետությանը տրամադրում 5 միլիոն դոլարի վարկ

ԱՄՀ-ի գործադիր խորհուրդը ավարտեց Հայաստանի Հանրապետության տնտեսական ցուցանիշների չորրորդ դիտարկումը Աղքատության կրճատման և տնտեսական աճի եռամյա ծրագրի ներքո (տես՝ Մամլո հաղորդագրություն N 05/123): Դիտարկման ավարտը, որն իրականացվել էր ըստ ժամկետի լռանալու սկզբունքի[1], թույլ է տալիս պայմանագրի շրջանակներում Հայաստանին տրամադրել ևս 3.28 միլիոն ՍԴՌ (շուրջ 5 միլիոն դոլար): Արդյունքում ծրագրի ընդհանուր հատկացումը կկազմի 16.4 միլիոն ՍԴՌ (շուրջ 24.9 միլիոն դոլար):

ԱԿՏԱ-ն ԱՄՀ-ի արտոնյալ պայմաններով տրվող վարկ է ցածր եկամուտներ ունեցող երկրների համար: ԱԿՏԱ-ի կողմից աջակցվող ծրագրերը հիմնված են երկրի հասարակության և զարգացման գործընկերների լայն մասնակցությամբ մշակված աղքատության կրճատման ռազմավարությունների վրա, որոնք կարտացոլվեն ԱԿՏԱ ծրագրում: Դա նպատակ է հետապնդում ապահովելու, որպեսզի ԱԿՏԱ-ի կողմից աջակցվող ծրագրերը համապատասխանեն մակրոտնտեսական, կառուցվածքային և սոցիալական քաղաքականությունների համապարփակ շրջանակներին՝ տնտեսական աճի և աղքատության կրճատման նպատակով: ԱԿՏԱ վարկերը տրամադրվում են տարեկան 0.5 տոկոսով և ենթակա են վերադարձի 10 տարի հետո 5.5 տարվա հետաձգմամբ մայր գումարի վճարման գծով:

---

[1] Գործադիր խորհուրդը որշումներ է ընդունում ըստ ժամկետի լռանալու գործընթացի, երբ Խորհրդի հետ համաձայնեցվում է, որ առաջարկը կարող է դիտարկվել առանց պաշտոնական քննարկումների անցկացման: